



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13, Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ.փոստ [kotayk@mta.gov.am](mailto:kotayk@mta.gov.am)

05.07.2014 N \_\_\_\_\_

### Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Կ Ա Ն ՈՒ Ղ Ե Ր Ձ ՄԱՀՄԱՆԱԴԻՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ


Ջերմորեն շնորհավորում եմ Սահմանադրության օրվա առիթով և փաստում, որ տոնական այս օրն իրավամբ համարվում է հայ ժողովրդի նորօրյա պատմության նշանակալի իրադարձություններից մեկն ու իր առանցքային ներկայությամբ մաս է կազմում մեր ազգային տոնացույցի ուրույն էջերին:

Սահմանադրության օրն այն լավագույն առիթն ու հնարավորությունն է, երբ մենք հերթական անգամ վերահաստատում ենք ժողովրդավարական սկզբունքների և արժեքների նկատմամբ ունեցած նվիրումն ու հավատարմությունը՝ նախանշելով մեր հայրենիքի ապագայի կերտման կարևորագույն ուղղությունները:

Վստահ եմ, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության առավել կատարելագործմանը միտված բարեփոխումների գործընթացը ևս կունենա իր ցանկալի արդյունքը՝ դրական ազդակներ հաղորդելով հասարակական կյանքի ամենատարբեր բնագավառներին:

Սահմանադրության օրվա տոնական խորհրդով ևս պետք է ցանկանանք, որ մեր երկրում մշտապես գերակայեն բարությունն ու խաղաղությունը՝ նպաստելով համազգային բոլոր նախաձեռնությունների արդյունավետ իրականացմանը:

*Հարգանքներով*

  
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ